արժանի առնէ[1] ամէն. և եթէ ոք հակառակ գոցի նգովեալ եղիցի ամէն։

(նօտրագիրը, սև թանաքով) Դարձեալ այլ յիշատակ որ առաձ են ս՛ը

5 խաչ

91. (բոլորագիրը) խաչին։ Յիշեցէք ի ք՛ս և ա՛ծ ողորմի ասացէք նիկո՛ղայոս կ՛թկոսին և իւր ծնօղացն հօրն պարոն բագին և մօրն խոնդզա խաթունին, և եղբարցն՝ պարոն միքայէլին և խաչատուրին, 10 ի հայրապետուե՛ իւրում ե՛ ամի թվին ռ՛ճ՛ղ՛բ՛-ին որ ըստացաւ և գնեաց ի հալալ վաստակոց զաղշղու ջաղացն, կեսն՝ բրայիմ յամզի մուզտաֆիից, կեսն էլ՝ ամիրխանիից. ա՛ծ զիւր հոգին լուսաւորէ և զինքն ընդ երանելի ս՛ը հայրապետացն դասակից և պսա- 15 կակից արասցէ որ զջաղաց ոխվ արար ի դուռն ս՛ը խաչին. ա՛ծ լուսաւորէ զիւր հոգին ամէն։ Դ՛րձ յիշեցէք և ողորմի ասացէք նիկողայոս կ՛թկոսին որ զոսկանի ա՛ծաշունչ և զվենէտիկ արծաթակող աւե

92.[2] աւետարան մի ոխվ արար ի դուռն[3] ս՛ը խա- 20 չին. ա՛ծ լուսաւորէ զիւր հոգին և ծնողաց նորին ամէն։ Յիշեցէք և ա՛ծ ողորմի ասացէք բաքխներու ա՛ր մկրտչին և հօրն մ՛հա՛սի խլղաթին և մօրն պէ- կկիսխանին և կնոջն վարդխաթունին, որդոցն բ՛ խլղա- թին, բ՛ ա՛ծատուրին և դստերացն սուսունբարին, 25 պէկկիսխաթունին, որ գաւաշու հողէն դ՛ արտ գնե- ցին դ՛ճ՛ ղ՛ռշ. այս է արտերաց անունքն. վոս արտ, ուռոց յառուի արտն, գազուտ արտն, շառաֆու քոի արտն ըստացաւ հալալ վաստակոց իւրոց[4] և արար

---

[1] Ջ. առնէ-ից առաջ ամ ջնջ. նշ.

[2] Ջ. բացի իշխամարից էլի ճակտին կայ նաև | դ | .

[3] Ջ. իդդուռն, առաջին դ-ն ջնջ. նշ.

[4] Ջ. իւրոց-ից առաջ իր ջնջ. նշ.